ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Քրիստիննե Գրիգորյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2019 թվականի դեկտեմբերի 1-ից 5-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի՝ GRECO-ի 84-րդ լիագումար նիստին: **Քննարկված թեմաները՝** Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) 84-րդ լիագումար նիստի ընթացքում հաստատվել է Հայաստանի Հանրապետության չորրորդ փուլի երկրորդ համապատասխանության զեկույցը, ինչպես նաև քննարկվել են ՀՀ կողմից կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող բարեփոխումներին առնչվող մի շարք հարցեր**:**

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը 2019 թվականի դեկտեմբերի 1-ից 5-ը մասնակցել է Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի GRECO-ի 84-րդ լիագումար նիստին :

Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) 84-րդ լիագումար նիստի ընթացքում հաստատվել է Հայաստանի Հանրապետության չորրորդ փուլի երկրորդ համապատասխանության զեկույցը, ինչպես նաև քննարկվել են ՀՀ կողմից կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող բարեփոխումներին առնչվող մի շարք հարցեր:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը GRECO-ի 84-րդ լիագումար նիստին հանդես է եկել ելույթով, որի շրջանակներում ներկայացրել է գնահատման համապատասխանության զեկույցով Հայաստանին տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ իրականացրած քայլերը: Հարկ է նշել, որ այդ գնահատման զեկույցի մի շարք հանձնարարականներ վերաբերել են պատգամավորների, դատավորների, դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ արդյունավետ պայքարին:

Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը անդրադարձել է նաև Հայաստանի Հանրապետության կողմից կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ գրանցած առաջընթացին, այս ոլորտում տեղի ունեցած վերջին զարգացումներին և բարեփոխումներին: Մասնավորապես, նախարարի տեղակալը նիստի մասնակիցներին ներկայացրել է ս.թ. հոկտեմբերին ՀՀ կառավարության կողմից հաստատված Հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրանից բխող 2019-2022թթ. գործողությունների ծրագրով ամրագրված առաջնահերթություններն ու գերակա ուղղությունները: Ռազմավարական փաստաթղթերով նախատեսվում է կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնական ուղղություններ՝ կոռուպցիայի կանխարգելում, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և հակակոռուպցիոն կրթություն ու իրազեկում:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը շեշտել է նաև, որ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսվում է ստեղծել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Հակակոռուպցիոն կոմիտե, որն օժտված կլինի կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով անկախության բավարար երաշխիքներ, մասնագիտացված ստորաբաժանում Գլխավոր Դատախազության կազմում, հակակոռուպցիոն մասնագիտացված դատարաններ: Որպես պատվիրակության ղեկավար Ք. Գրիգորյանը նաև ներկայացրել է թավշյա հեղափոխությունից հետո ժողովրդավարական ընտրությունների միջոցով ընտրված նոր Ազգային ժողովի կողմից հանրային քննարկումների և խորհրդակցությունների

անցկացման բարելավված պրակտիկաները՝ վիճակագրական տվյալներ ներկայացնելով նորընտիր Ազգային ժողովի առավել <դռնբաց> և ներառական աշխատանքի, ինչպես նաև նորընտիր պատգամավորների շրջանում շահերի բախման և այլ գործունեությամբ զբաղվելու արգելքի կանոնների վերաբերյալ անցկացված իրազեկման աշխատանքների վերաբերյալ: Հայաստանի պատվիրակության ղեկավարը լիագումարին ներկայացրել է նաև Ազգային ժողովի աշխատանքների թափանցիկության և ներառականության, ինչպես նաև վարքագծի կանոնների մշակման ու այդ մասին իրազեկման ուղղությամբ պլանավորված աշխատանքների մասին:

Անհրաժեշտ է նշել, որ նիստի ընթացքում, մինչ նախնական զեկույցի պաշտոնական հաստատումը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի և ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաների միջև տեղի է ունեցել աշխատանքային քննարկումներ և բանակցություններ՝ զեկույցի վերջնականացման և ձևակերպումների ճշգրտման նպատակով:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը GRECO-ի 84-րդ լիագումար նիստի ընթացքում հանդես է եկել նաև որպես Ուկրաինայի 4-րդ փուլի Գնահատման զեկույցի համազեկուցող՝ ներկայացնելով Ուկրաինայի կողմից դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը վերաբերող ԳՐԵԿՈ-ի առաջարկությունների կատարման ընթացքը:

Հարգանքով,
ՀՀ արդարադատության
նախարարի տեղակալ՝

Recoverable Signature

X

Kristinne Grigoryan

Signed by: GRIGORYAN KRISTINNE 7708810450

Քրիստիննե Գրիգորյան

10.12.2019թ.